ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 70

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

23-ը դեկտեմբերի 2023թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 33-ը: Նիստին մասնակցում էին նաև Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի գլխավորած աշխատանքային խումբը՝ ԵՊՀ զարգացման և նորարարության գծով պրոռեկտոր Միքայել Հովհաննիսյանը, ԵՊՀ գիտական հարցերի գծով պրոռեկտոր Ռաֆայել Բարխուդարյանը (ԵՊՀ ԻՄ գիտխորհրդի անդամ), ԵՊՀ ռեկտորի խորհրդական Վիգեն Խալատյանը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Ա. Հ. Մակարյանը բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ի 2022-2023թթ. ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվություն:
   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյան/
2. Ընթացիկ հարցեր:

Բաց քվեարկությամբ՝ 33 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում

- Հաստատել նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին՝ «ԵՊՀ ԻՄ-ի 2022-2023թթ. ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվություն» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ հաշվետու (2022-2023) ուստարում մասնաճյուղն իր գործունեությունը կազմակերպել է ԵՊՀ ԻՄ 2022-2026 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի (ՌԾ) և դրա իրականացման ժամանակացույցի հիման վրա: Պլանավորված գործողություններն ուղղորդված են եղել ապահովելու մասնաճյուղի ռազմավարական 3 նպատակների իրականացումը՝ բարձրորակ կրթություն, գիտություն և նորարարություն, հանրային ներգրավում: ԵՊՀ ԻՄ-ի գործունեության հիմնական նպատակն է անխափան և արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը՝ ուսանողների համար ապահովելով անհրաժեշտ

կրթական միջավայր ու ռեսուրսներ, կրթությունն իրականացնել բարձրակարգ դասախոսական կազմի ներգրավմամբ, մատուցել նորարարական ու առաջադեմ կրթություն, նաև նպաստել դիմորդների թվի աճին և իր շրջանավարտների ապագա կարիերայի ձևավորմանը:

ԵՊՀ ԻՄ-ն իր աշխատանքի արդյունքները գնահատելու և հանրությանը ներկայացնելու համար յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին հրապարակում է իր Գործունեության արդյունքային ցուցանիշների (ԳԱՑ) լրակազմը, որոնց հիման վրա էլ կազմվել է տվյալ հաշվետվությունը:

2022 թ. սեպտեմբերից 2023 թ. դեկտեմբեր հաշվետու ժամանակահատվածի գործողությունների պլանով Մասնաճյուղն իր ուսումնական և վարչական ստորաբաժանումների հետ համատեղ ռազմավարական ծրագրի 3 նպատակների 19 խնդիրների 98 գործողությունների իրականացման համար մշակել է մարտավարություն՝ շուրջ 288 նպատակային քայլերով և 211 ակնկալվող ցուցիչներով: ԵՊՀ ԻՄ 2022-2026 թթ. զարգացման ՌԾ-ի իրականացման գործողությունների պլանի կատարողականից ելնելով՝ առանձնացվել են հաշվետու ուստարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գրանցած տասնյակից ավել հաջողություններ և դժվարություններ: Գրանցված հաջողություններից էին ՌԾ-ի հիման վրա մշակված գործողությունների տարեկան պլանին համապատասխան գործունեությունը, «ԳԱՑ 2018-2023»-ի լրակազմի կիրառումը արդյունքների վերլուծության համար, Մասնաճյուղի գործունեության արդյունավետության բարելավման և համակարգման համար մշակված կամ վերանայված շուրջ 40 փաստաթղթերը, մշտադիտարկվող և վերանայված վերջնարդյունքներով կրթական ծրագրերը, ներդրված նոր մագիստրոսական ծրագիրը, Moodle առցանց ուսուցման համակարգի կիրառումը բոլոր դասախոսների կողմից, անխափան իրականացվող ուսումնական գործընթացը, բարձրակարգ պրոֆեսորադասախոսական կազմը, որակավորման բարձրացման գործող կրթագիտական ծրագիրը:

Մյուս հաջողություններն էին արդիականացված ենթակառուցվածքները, Տեղեկատվության անվտանգության կենտրոնի ստեղծումը, գրականության թվայնացման համար ներդրված KOHA համակարգը, ակտիվ գործող էլեկտրոնային գրադարանը և կայքէջը, իրականացված դրամաշնորհային ծրագրերը, կազմակերպված միջազգային գիտաժողովները, արտերկրի համալսարանների հետ համագործակցությունը, առաջին անգամ դասախոսների և ուսանողների փոխանակումը, ինչպես նաև միջազգային ամառային դպրոցի իրականացումը, մարզի գործատուների հետ համագործակցությունը, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հեղինակության և վարկանիշի աճը:

Դժվարություններից էին գործունեության որոշ ոլորտների համար պլանավորված «չափազանց լավատեսական» արդյունքների իրականացումը, դասախոսների կողմից կրթական ծրագրերի վերջնարդյունքներին ոչ համապատասխան գործնական առաջադրանքների, Moodle-ի հնարավորությունների, դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդների ոչ ամբողջական կիրառումը:

Այլ դժվարություններից էին լսարանների, ուսանողական հանրակացարանի և կապիտալ վերանորոգման կարիք ունեցող ենթակառուցվածքների, կայքի բարելավման, թվային գործիքների ավելի լայն կիրառման, ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացման (գիտելիքի, ստեղծագործական արտադրանքի և ծառայությունների ապրանքայնացման) խնդիրները:

ԵՊՀ ԻՄ 2022-2023 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ տնօրենի ներկայացրած հաշվետվության մանրամասներին կարող եք ծանոթանալ հավելված 1-ում:

Արտահայտվեցին – Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, ԵՊՀ զարգացման և նորարարության գծով պրոռեկտոր Միքայել Հովհաննիսյանը, ԵՊՀ գիտական հարցերի գծով պրոռեկտոր Ռաֆայել Բարխուդարյանը, ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Հովհաննիսյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը, Տավուշի մարզի մարզպետի տեղակալ Նարեկ Ղուշչյանը, ԵՊՀ ԻՄ ՈՒԽ-ի նախագահ Դավիթ Ալեքսանյանը և այլք:

Հաշվետվության ներկայացումից հետո անդրադարձ կատարվեց գիտական խորհրդի նիստի մասնակիցների հարցերին և առաջարկություններին, որոնք հիմնականում վերաբերում էին կրթական ծրագրերին, ԵՊՀ ԻՄ-ում այլ մասնագիտությունների ներդրման հնարավորությանը, գիտության և նորարարության տեսանկյունից Մասնաճյուղի ուժեղացմանը, «ԲանՈՒԳործ. ԵՊՀ էքսպո-2024»-ում ԵՊՀ ԻՄ կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների աշխատանքներն առանձին տաղավարով ցուցադրելուն կամ ցուցահանդես-վաճառք կազմակերպելուն և այլն:

ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը՝ շնորհակալություն հայտնեց ԵՊՀ ԻՄ 2022-2023 ուստարվա գործունեության վերաբերյալ տնօրենի ներկայացրած մանրակրկիտ հաշվետվության համար, ընդգծելով, որ Մայր բուհը պատրաստ է ամեն ինչ անել, որ Մասնաճյուղը լիարժեք ընդգրկվի պլանավորման և իրականացման ԵՊՀ ընդհանուր բոլոր պրոցեսներում: Պարոն Հ. Հովհաննիսյանը ուրախությամբ նշեց, որ, իսկապես, ԵՊՀ-ում տեղի ունեցող գործընթացները շատ արագ ներդրվում են Իջևանի մասնաճյուղում. խոսքը վերաբերում է էլեկտրոնային ռեսուրսների օգտագործմանը, փաստաթղթաշրջանառությանը, «E-learning»-ին, «Registrar»-ին, կայքի հետ կապված հարցերին և այլն: Ընդգծվեց նաև, որ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գործունեության գիտական կողմի ուժեղացման, ԵՊՀ և այլ միջազգային դրամաշնորհային ծրագրերում մասնաճյուղի հնարավորինս ակտիվ ներգրավման, տարածաշրջանում գործող կազմակերպությունների և ձեռնարկությունների հետ ԵՊՀ ԻՄ սերտ համագործակցության ապահովման ուղղություններով:

ԵՊՀ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում գիտական հետազոտությունները ակտիվացնելու համար կարելի է հրավիրյալ պրոֆեսորի օրինակով ներդնել հրավիրյալ գիտնական ԵՊՀ ԻՄ-ում, որը ներքին դրամաշնորհների շրջանակում կարող է ձևավորել գիտական բջիջ Մասնաճյուղում: Նշվեց, որ ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կազմակերպում է «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2024» մրցույթը՝ պետք է փորձել մասնակցել մրցույթին:

Գ. Հովհաննիսյանը առաջարկեց, ԵՊՀ ԻՄ լրավճարների կարգում ավելացնել կետ ԵՊՀ ԻՄ-ի այն ոչ հիմնական աշխատողներին, որոնք ուսումնական հաստատություններում չեն աշխատում:

Առաջարկվեց նաև ակտիվացնել տարածաշրջանում ակտիվ աշխատող հիմնարկների հետ համագործակցությունը:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 33 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ

1 ԵՊՀ ԻՄ-ի՝ 2022-2023 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար,
2 ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումն « ԵՊՀ ԻՄ-ի 2022-2023թթ. ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվություն » հարցի կապակցությամբ ընդունել ի գիտություն։

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ